Մի փոքր տարտղնված ու տարօրինակ է Գարեգին Զարբհանալյանի տեսակետը, որում նաև հասկացությունների շփոթ կա: Ամեն դեպքում նա նույնպես Դավրիժեցու երկը, իբրև գրական իրողություն, զանց է առնում. «...ասոնց ալ (17-րդ դարի պատմագրքերի–Ա.Ն.) գլխաւոր արդիւնքը պատմական աւանդից մէջ է, և միայն այս նկատմամբ կրնան ազգային գրականութեանց պատմութեանը մէջ յիշատակուիլ»[16]:

Փաստն այն է, սակայն, որ ***Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» աշխատությունը հատկանշվում է նաև պատմական իրադարձությունների ներկայացման գեղարվեստական ոճով ու մոտեցմամբ, ինչպես նաև զուտ գրական իրողությունների, մասնավորապես՝ կառուցվածքային արտաքին ու ներքին օրինաչափությունների պահպանմամբ, տարբեր գրական ժանրերի կիրառությամբ, որոնց ընդհանրականությունը ապահովում է պատմագեղագիտական որոշակի միասնություն:*** Դա է պատմագրության ժանրաձևի օրենքը, որը Դավրիժեցու պատմագրքում գիտակցաբար, թե ակամա պահպանված է հիմնովին՝ այն քննելի դարձնելով նաև գրական մակարդակում:

* * *

Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» աշխատության՝ գրապատմական արժեք ունեցող առաջին գնահատականը, թերևս, Ոսկան Երևանցու կողմից դրա լույսընծայումն էր՝ 1669 թվականին, Ամստերդամում: Դավրիժեցին, այդպիսով, դարձավ առաջին հայ պատմիչը, ում աշխատությունը լույս տեսավ նրա կենդանության օրոք: Բնականաբար, Ոսկան Երևանցին հենց

---

[16] ***Գարեգին Զարբհանալեան***, Պատմութիւն հայերէն դպրութեան ի պէտս ուսման ազգային վարժարանաց, Բ. Նոր մատենագրութիւն, Վենետիկ, 1878, էջ 171: